

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՕՐԻՆԱԿ 1 – Armenian

1. Ճանապարհաշինական աշխատանքների իրականացման տարածքով երթևեկելիս դուք պետք է
 - ա. դանդաղեցնեք մեքենայի ընթացքը՝ բանվորների աշխատանքը դիտելու համար.
 - բ. կրճատեք տարածությունը դիմացից ընթացող մեքենայի ու ձեր միջև.
 - գ. զգուշորեն անցնեք ճանապարհաշինական աշխատանքների իրականացման տարածքը և ավելորդ հետաքրքրություն չցուցաբերեք աշխատանքների նկատմամբ:
2. Անկյունից աջ շրջադարձ կատարելու համար դուք՝
 - ա. իրավունք չունեք մտնելու հեծանվուղի.
 - բ. պետք է հեծանվուղի մտնեք միայն այն ժամանակ, երբ շրջադարձից առաջ կանգ եք առնում.
 - գ. պետք է հեծանվուղի մտնեք շրջադարձ կատարելուց առաջ:
3. Եթե լուսացույցը չի աշխատում, դուք պետք է՝
 - ա. կանգ առնեք և շարժվեք այն ժամանակ, երբ դա անվտանգ է.
 - բ. կանգ առնեք խաչմերուկ մուտք գործելուց առաջ և նախ ճանապարհի տաք մյուս բոլոր տրանսպորտային միջոցներին.
 - գ. դանդաղեցնեք մեքենայի ընթացքը կամ կանգ առնեք միայն անհրաժեշտության դեպքում:
4. Հետիոտները հատում է ձեր երթևեկության գոտին, բայց գծանշված հետիոտնային անցում չկա: Դուք պետք է՝
 - ա. համոզվեք, որ հետիոտները տեսնում է ձեզ, բայց շարունակեք առաջ ընթանալ.
 - բ. զգուշորեն շրջանցեք հետիոտնին.
 - գ. կանգ առնեք և հետիոտնին թույլ տաք հատել փողոցը:
5. Միշտ ամրացրեք անվտանգության գոտին՝
 - ա. եթե տրանսպորտային միջոցը 1978 թվից հետո է արտադրված.
 - բ. եթե լիմուզինի մեջ չեք գտնվում.
 - գ. եթե տրանսպորտային միջոցն անվտանգության գոտի ունի:
6. Մեծ բեռնատարի դիմաց լրացուցիչ տարածությունն անհրաժեշտ է՝
 - ա. այլ վարորդներին, որոնք մուտք են գործում արագընթաց բազմագոտի ճանապարհ.
 - բ. բեռնատարի վարորդին, որպեսզի հասցնի կանգնեցնել մեքենան.
 - գ. այլ վարորդներին, երբ նրանք ցանկանում են դանդաղեցնել մեքենայի ընթացքը:
7. Ճանապարհները սայթաքուն են դառնում անձրևը սկսելուց անմիջապես հետո: Երբ ճանապարհը սայթաքուն է, դուք պետք է՝
 - ա. խուսափեք կտրուկ շրջադարձերից և կտրուկ արգելակումներից.
 - բ. ստուգեք անիվների կառչելիությունը գառիվեր ճանապարհով բարձրանալիս.
 - գ. կրճատեք տեսադաշտի տարածությունը ձեր տրանսպորտային միջոցի առջև:
8. Ճանապարհատրանսպորտային պատահարներն ավելի հաճախ տեղի են ունենում, երբ՝
 - ա. բոլոր տրանսպորտային միջոցները շարժվում են գրեթե նույն արագությամբ.
 - բ. երթևեկության մի գոտին ավելի արագ է շարժվում, քան մնացած գոտիները.
 - գ. տրանսպորտային միջոցներից մեկը երթևեկության հոսքից ավելի արագ կամ դանդաղ է շարժվում:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՕՐԻՆԱԿ 2 – Armenian

1. Երբ կանգնած վիճակից մուտք եք գործում երթևեկության հոսք (եզրաքարից հեռանալիս), դուք
 - ա. պետք է 200 ֆուտ (61 մ) տարածության վրա ընթացնալ այլ մեքենաներից ավելի դանդաղ.
 - բ. բավականին մեծ տարածության կարիք ունեք երթևեկության հոսքի արագությանը հավասարվելու համար.
 - գ. պետք է սպասեք, մինչև առաջին երկու մեքենաներն անցնեն, ապա մտնեք երթևեկության գոտի:
2. Վազանց կատարելուց հետո ձեր զբաղեցրած երթևեկության գոտին վերադառնալն անվտանգ է, եթե
 - ա. անմիջապես ձեր աջ կողմում չկան տրանսպորտային միջոցներ.
 - բ. տեսնում եք մեքենայի ցուլապատերները ձեր հետևի դիտահայելիների մեջ.
 - գ. անցել եք մյուս մեքենայի առջևի թափարգելը:
3. Միացրեք մոտարձակ լույսերը հանդիպակաց տրանսպորտային միջոցների համար, կամ երբ դուք գտնվում եք տրանսպորտային միջոցից մինչև 300 ֆուտ (91,5 մ) հեռավորության վրա, եթե
 - ա. դուք մոտենում եք հետևից.
 - բ. այն մոտենում է ձեզ հետևից.
 - գ. դուք արդեն անցել եք այդ մեքենայից:
4. Եթե արագընթաց բազմագոտի մայրուղու վրա տեսնում եք շինարարական աշխատանքների մասին զգուշացնող նարնջագույն նշաններ և կոներ, դուք պետք է
 - ա. դանդաղեցնեք մեքենայի ընթացքը, որովհետև առջևում գոտին վերջանում է.
 - բ. պատրաստ լինեք առջևում աշխատողների և սարքավորումների հանդիպելու.
 - գ. վերադասավորվեք և շարունակեք երթևեկել նույն արագությամբ:
5. Բնակելի թաղամասերում հետադարձ երկաթուղի կատարել
 - ա. միակողմանի փողոցում կանաչ սլաքի ուղղությամբ.
 - բ. երբ մոտակայքում մոտեցող տրանսպորտային միջոցներ չկան.
 - գ. հատելով մի գույգ կրկնակի հոծ դեղին զծերը:
6. Դուք համաձայն եք արյան ստուգում անցնել՝ ձեր արյան, արտաշնչած օդի կամ մեզի մեջ ակոհոլի պարունակությունը չափելու համար
 - ա. միայն եթե ակոհոլ եք օգտագործել.
 - բ. ցանկացած ժամանակ, երբ մեքենա եք վարում Կալիֆոռնիա նահանգում.
 - գ. միայն ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից լինելու դեպքում:
7. Կանաչ սլաքի դեպքում դուք պետք է
 - ա. խաչմերուկում ճանապարհը զիջեք ցանկացած տրանսպորտային միջոցի, հեծանվի կամ հետիոտնի.
 - բ. հետիոտներին ճանապարհ տաք միայն խաչմերուկում.
 - գ. առաջ շարժվելուց առաջ չորս վայրկյան սպասեք:
8. Գիշերային ժամերին վատ լուսավորված փողոցում մեքենա վարելիս դուք պետք է
 - ա. մեքենան վարեք բավականին դանդաղ, որպեսզի կարողանաք կանգ առնել ձեր ցուլապատերներով լուսավորված տարածքի սահմաններում.
 - բ. միացնեք ձեր հեռարձակ լույսերը, որպեսզի ավելի լավ տեսնեք առջևից ընթացող տրանսպորտային միջոցները.
 - գ. սարքերի վահանակը պահեք վատ լուսավորված, որպեսզի այն ավելի տեսանելի լինի մյուս վարորդներին: